



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 05 » _____ 10 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/-429

Սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 4-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանները ՀՀ-ում

Սեպտեմբերի 28-30-ին՝ տեղ-տեղ, հոկտեմբերի 1-ին, 4-ին՝ առանձին շրջաններում, 2-3-ին՝ գրեթե ողջ հանրապետությունում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը գրանցվել է Գորիսում՝ 24մմ, Կապանում՝ 22մմ, Գավառում և Որոտանում՝ 15մմ, մնացած շրջաններում՝ մինչև 13 մմ քանակությամբ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը սեպտեմբերի 28-ին եղել է նորմայից բարձր 2-4 աստիճանով, սեպտեմբերի 29-30-ին եղել է նորմայի սահմաններում, հոկտեմբերի 1-ին, 4-ին՝ նորմայից բարձր 1-2 աստիճանով, հոկտեմբերի 2-3-ին՝ 1-3 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է սեպտեմբերի 28-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի հովիտներում դիտվել է +23...+28°C (Արենիում՝ 29°C), Տավուշում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +17...+22 (Բագրատաշենում՝ 27°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը շաբաթվա ընթացքում գրանցվել է հոկտեմբերի 3-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +2...+7 °C, Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ +7...+12°C (Թալինում՝ +1°C, Դիլիջանում՝ +6°C, Մեղրիում՝ +13°C):

Շաբաթվա ընթացքում դիտվել է քամի Արթիկում՝ 12մ/վրկ, պողթկման ժամանակ՝ 26/վրկ արագությամբ, Եղվարդում, Սիսիանում, Աշտարակում՝ 6-14մ/վրկ արագությամբ քամու ուժգնացում, պողթկումները՝ մինչև 16-18մ/վրկ և Երևանում՝ 9մ/վրկ, պողթկման ժամանակ՝ 16մ/վրկ արագությամբ:

Հոկտեմբերի 2-ին Մերձավանում դիտվել է կարկուտ՝ 5-6մմ, Գավառում՝ 10մմ տրամագծով:

Հոկտեմբերի 4-ին Կապանում դիտվել է ուժեղ անձրև՝ 34.7մմ/ 6 ժամ 10 րոպեում:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել՝ 1900.63 մ (04.10.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 5 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան